https://doi.org/10.46991/S&L/2023.95.049

ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԵՎ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՆՁԱՏՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ[1]

Եվա Սաղոյան
ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,
ՀՀ արդարադատության նախարարության
իրավական ակտերի փորձաքննության գործակալության
գերատեսչական իրավական ակտերի փորձաքննության բաժնի պետ

«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը[2] զբոսաշրջային ծառայությունների մատուցման հարաբերություններում որպես սպառողի կոնտրագենտ նախատեսում է զբոսաշրջային գործունեության սուբյեկտին: Ըստ Օրենքի՝ զբոսաշրջային գործունեության սուբյեկտներն են զբոսաշրջային օպերատորը և զբոսաշրջային գործակալը, որոնցից առաջինն իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր է, որն իրականացնում է **զբոսաշրջային արդյունքի ձևավորման, խթանման և իրացման գործունեություն**, ինչի արդյունքում տրամադրում է զբոսաշրջային փաթեթ, երկրորդը՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն իրականացնում է **զբոսաշրջային արդյունքի խթանման և իրացման գործունեություն**, ինչի արդյունքում տրամադրում է զբոսաշրջային փաթեթ (Օրենք, հոդված 2):

Այսպիսով, սպառողներին զբոսաշրջային փաթեթներ կարող են իրացնել թե՛ զբոսաշրջային օպերատորը, թե՛ զբոսաշրջային գործակալը: Այն դեպքում, երբ զբոսաշրջային օպերատորն անձամբ է իրացնում իր ձևավորած զբոսաշրջային փաթեթը, պարտավորության խախտման դեպքում պատասխանատվության սուբյեկտի որոշման հարցում դժվարություն չի առաջանում: Այլ է իրավիճակը, երբ զբոսաշրջային փաթեթները խթանում և իրացնում է զբոսաշրջային գործակալը:

Զբոսաշրջային օպերատորը և գործակալը քաղաքացիական շրջանառության ինքնուրույն սուբյեկտներ են, ուստի նրանցից մեկի կողմից մյուսի ձևավորած զբոսաշրջային փաթեթները խթանելու և իրացնելու կապակցությամբ այդ սուբյեկտների միջև անհրաժեշտաբար առաջանում է իրավական կապ:

Զբոսաշրջային գործունեության սուբյեկտների միջև ծագող իրավահարաբերությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ հատուկ կարգավորման չեն ենթարկվել, ինչի պատճառով գործնականում այդ հարաբերությունների կանոնակարգումն իրականացվում է պայմանագրային դաշտում:

Հայրենական զբոսաշրջային պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ զբոսաշրջային օպերատորները և գործակալներն իրենց պայմանագրային հարաբերությունները, որպես կանոն, կառուցում են հանձնարարության, կոմիսիայի կամ գործակալության պայմանագրերի հիման վրա: Ընդ որում, ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան դատական պրակտիկան[3] վկայում է, որ զբոսաշրջա-

[1] Սույն հոդվածը զեկուցվել է 2022թ. դեկտեմբերի 8-ի ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների գիտական նստաշրջանին:
[2] Ընդունվել է 2003 թ. դեկտեմբերի 17-ին, ՀՀՊՏ 2004.01.29/6(305), այսուհետ՝ Օրենք:
[3] ԱՄՆ մի շարք նահանգների դատարաններ արձանագրել են, որ զբոսաշրջային գործակալները ոչ թե զբոսաշրջային ծառայություններ մատուցողների, այլ սպառողի գործակալներն են, ինչը վերջիններիս ազատում է զբոսաշրջային ծառայությունների մատուցման հետևանքով սպառողին պատճառված վնասի համար պատասխանատվությունից: https://travel.uslegal.com/safety/the-travel-industry/liability-of-travel-agencies

յին գործակալները, անկախ զբոսաշրջային օպերատորների հետ կնքված պայմանագրի տեսակից, պարտավորության խախտման դեպքում, հղում անելով իրենց գործունեության միջնորդային բնույթին, հիմնականում փորձում են խուսափել պատասխանատվությունից:

ՀՀ դատական պրակտիկայից անգամ հայտնի են դեպքեր, երբ զբոսաշրջային գործակալները սպառողների հետ զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու փոխարեն կնքում են հանձնարարության պայմանագիր կամ «հանձնարարության պայմանագրի մոդելով» գործակալության պայմանագիր և պարտավորության խախտման դեպքում վկայակոչում իրենց՝ ոչ թե զբոսաշրջային օպերատորի, այլ զբոսաշրջիկի հանձնակատարը լինելու, հետևաբար՝ պատասխանատվության սուբյեկտ չլինելու հանգամանքը[1]:

Կարծում ենք՝ զբոսաշրջային ծառայությունների մատուցման պարտավորության խախտման դեպքում սպառողի համար պատասխանատվության սուբյեկտի կանխատեսելիության տեսանկյունից նման իրավիճակը խնդրահարույց է:

Խնդիրն ավելի է բարդացնում զբոսաշրջային ծառայությունների մատուցման պարտավորության առանձնահատուկ սուբյեկտային կազմը, մասնավորապես՝ կատարողի կողմում հանդես եկող սուբյեկտների բարդ շղթան, որտեղ զբոսաշրջային փաթեթները ձևավորում է զբոսաշրջային օպերատորը, դրանք խթանում և իրացնում՝ զբոսաշրջային գործակալը, իսկ դրանցում ընդգրկվող ծառայությունները մատուցում՝ համապատասխան տնտեսվարող սուբյեկտները (փոխադրող, հյուրանոց և այլն):

Վերոգրյալի հաշվառմամբ՝ գոյություն ունեցող հակասական պրակտիկան վերացնելու նպատակով, կարծում ենք՝ ակնհայտ է սպառողին իրացվող զբոսաշրջային փաթեթի համար պատասխանատվության սուբյեկտի հստակ օրենսդրական ամրագրման անհրաժեշտությունը:

Սույն հոդվածի շրջանակներում չանդրադառնալով զբոսաշրջային փաթեթում ընդգրկվող ծառայությունների համար այդ ծառայությունները մատուցողների և զբոսաշրջային գործունեության սուբյեկտների պատասխանատվության հարաբերակցության հիմնախնդիրներին՝ հարկ ենք համարում քննարկել զբոսաշրջային օպերատորի և զբոսաշրջային գործակալի պատասխանատվության որոշ հարցեր:

Այս սուբյեկտների օրենսդրական բնորոշումներից բխում է, որ նրանց հիմնական տարբերությունն իրականացվող զբոսաշրջային գործունեության բովանդակությունն է. զբոսաշրջային օպերատորը **ձևավորում, խթանում և իրացնում է** զբոսաշրջային փաթեթները, իսկ զբոսաշրջային գործակալը՝ **խթանում և իրացնում** զբոսաշրջային օպերատորի կողմից ձևավորված (ձևավորվող) զբոսաշրջային փաթեթները:

Այսպիսով, զբոսաշրջային փաթեթը՝ որպես սպառողին իրացվող «արտադրանք», ձևավորվում է բացառապես զբոսաշրջային օպերատորի կողմից, իսկ զբոսաշրջային գործակալն այդ գործընթացին որևէ մասնակցություն չունի, ինչն էլ հենց զբոսաշրջային գործունեության հիշյալ սուբյեկտներին տարբերակող հիմնական հատկանիշն է:

Զբոսաշրջիկների պահանջներին համապատասխան վերջիններիս ճանապարհորդությունների կազմակերպման գործընթացում զբոսաշրջային փաթեթների ձևավորման փուլը, որն ընդգրկում է փաթեթում ներառվող զբոսաշրջային ծառայությունների և դրանք մատուցողների ընտրությունը, այդ ծառայությունների որակի և անվտանգության ուսումնասիրումը, արդյունքում՝ համապատասխան ծառայություններ մատուցողների հետ պայմանագրային հարաբերությունների հաստատումը և օպերատիվ կապի պահպանումը, ունի առանցքային նշանակություն: Ուստի զբոսաշրջային օպերատորի կողմից զբոսաշրջային փաթեթի ձևավորումը կարծում

[1]Տե՛ս թիվ **ԵԿԴ/3810/02/16** քաղաքացիական գործով պատասխանողի դիրքորոշումը:

ենք՝ միանշանակ ստեղծում է զբոսաշրջային ծառայությունների պատշաճ մատուցման համար զբոսաշրջային օպերատորի պատասխանատվության հիմքեր, ինչը համապատասխանում է նաև միջազգային փորձին[1]:

Այս առնչությամբ ավելորդ չէ հիշատակել ՌԴ Բարձրագույն դատարանի դիրքորոշումն առ այն, որ սպառողների իրավունքների պաշտպանությանն առնչվող գործերով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ արտադրողը (կատարողը, վաճառողը, լիազորված կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը, ներկրողը) պատասխանատվության սուբյեկտ է՝ անկախ երրորդ անձանց (գործակալների) և սպառողների միջև ծագող պայմանագրային հարաբերություններին վերջինիս մասնակցությունից[2]:

Չժխտելով զբոսաշրջային փաթեթի համար բոլոր դեպքերում զբոսաշրջային օպերատորի՝ որպես այն ձևավորողի պատասխանատվության անհրաժեշտությունը՝ սպառողի առջև պատասխանատվության սուբյեկտի որոշման հարցում կարծում ենք՝ չպետք է անտեսել նաև զբոսաշրջային փաթեթը խթանող և այն սպառողին իրացնող սուբյեկտի՝ զբոսաշրջային գործակալի դերակատարումը:

Թեև Օրենքը զբոսաշրջային գործակալի գործունեությունը բնորոշում է որպես զբոսաշրջային արդյունքի միջնորդավորված իրացման գործունեություն, որն ընդգրկում է զբոսաշրջային օպերատորի գործունեության արդյունքում ձևավորած արդյունքի, այդ թվում՝ զբոսաշրջային փաթեթների իրացումը (հոդված 13, մաս 3), սակայն գործնականում զբոսաշրջային գործակալի գործունեության բովանդակության և նպատակների վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ այն չի սահմանափակվում սոսկ միջնորդային գործունեությամբ, և սպառողի հետ հարաբերություններում զբոսաշրջային գործակալը հանդես է գալիս որպես զբոսաշրջային գործունեության ինքնուրույն սուբյեկտ:

Այսպես, զբոսաշրջային գործակալները զբոսաշրջային փաթեթները խթանում և իրացնում են վճարի դիմաց՝ **շահույթ ստանալու նպատակով**: Զբոսաշրջային գործունեության սուբյեկտների համագործակցությունը, որպես կանոն, տևական է, քանի որ զբոսաշրջային գործակալները սովորաբար զբաղվում են զբոսաշրջային փաթեթների խթանման և իրացման պարբերական գործունեությամբ, այլ ոչ թե սպառողի հետ մեկանգամյա գործարքի կնքմամբ: Զբոսաշրջային փաթեթների խթանման և իրացման գործունեություն իրականացնելիս զբոսաշրջային գործակալը կարող է հանդես գալ ինչպես զբոսաշրջային օպերատորի, այնպես էլ իր անունից:

Այն դեպքում, երբ զբոսաշրջային գործակալն իր անունից, ինքնուրույն և իր ռիսկով, զբոսաշրջային օպերատորի կողմից տրվող վճարի դիմաց պարբերար զբաղվում է զբոսաշրջային փաթեթների խթանման և իրացման գործունեությամբ, ակնհայտ է այդ գործունեության գործարարական բնույթը: Եվ պատահական չէ, որ իրավաբանական գրականության մեջ միանշանակ ընդունվում է զբոսաշրջային գործակալի՝ գործարարական գործունեության ինքնուրույն սուբյեկտ լինելու հանգամանքը[3]: Ավելին, հայրենական Օրենքը նույնպես ուղղակիորեն ամրագրում է՝ զբոսաշրջային գործակալը զբոսաշրջային արդյունքի խթանման և իրացման գործունեություն իրականացնող **իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր է**

---

[1] «Փաթեթային ճանապարհորդությունների և առնչվող ճանապարհորդական համաձայնությունների մասին» ԵՄ 2015 թվականի նոյեմբերի 25-ի դիրեկտիվի իմպլեմենտացման արդյունքում ԵՄ անդամ պետությունների օրենսդրություններն ամրագրում են, որ պատասխանատվության սուբյեկտը ճանապարհորդության կազմակերպիչը, նույն ինքը՝ զբոսաշրջային օպերատորն է:

[2] Տե՛ս ՌԴ Բարձրագույն դատարանի 2020 թ. դեկտեմբերի 8-ի **№ 78-КГ20-43-К3** որոշումը:

[3] Տե՛ս օրինակ՝ **Батищев Е.**, Положение субъектов туристской деятельности// Пробелы в российском законодательстве, 2014, N 4, էջ 58:

(հոդված 2), ինչը, բնականաբար, կանխորոշում է նաև վերջինիս քաղաքացիաիրավական պատասխանատվության առանձնահատկությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն ամրագրում է ձեռնարկատիրական գործունեության հետ կապված պարտավորությունների շրջանակներում մի քանի պարտապանների պարտականությունների համապարտության կանխավարկածը (հոդված 361, մաս 2):

Այս սկզբունքը վկայում է քաղաքացիական շրջանառության պրոֆեսիոնալ մասնակիցների նկատմամբ օրենսդրական առավել խիստ մոտեցման մասին[1], ինչը պայմանավորված է առաջին հերթին իրավական կարգավորման նպատակներով, այն է՝ քաղաքացիական շրջանառության կայունության բարձրացումը, որը պետք է ապահովվի քաղաքացիական շրջանառության սուբյեկտների միջև ռիսկերի և բեռի բաշխման այնպիսի մեխանիզմով, ըստ որի՝ այն սուբյեկտները, որոնք առավելագույն շահ են ստանում քաղաքացիական իրավահարաբերություններին մասնակցությունից, պետք է կրեն լրացուցիչ բեռ և ռիսկեր: Այս կանոնն առավել ցայտուն դրսևորվում է քաղաքացիական պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար գործարարների պատասխանատվությունն ամրագրող նորմերում:

Գործարարների համար առավել խիստ պատասխանատվություն սահմանելը պայմանավորված է գործարարական պայմանագրերի կողմերի տնտեսական սերտ փոխգործակցությամբ և պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման պատճառով այդ փոխգործակցության խախտման հետևանքով նաև փոխհարաբերությունների ողջ բարդ շղթայի խախտման վտանգով[2]:

Նման մոտեցումն ուղղված է ապահովելու գործարարների կոնտրագենտների, հատկապես **սպառողների շահերի պաշտպանությունը** և ընդհանրապես քաղաքացիական շրջանառության կայունությունը: Եվ պատահական չէ, որ արտասահմանյան որոշ երկրների օրենսդրություններ ընդլայնում են պարտապանների համապարտության կանխավարկածը՝ դուրս գալով գործարարական գործունեության շրջանակներից և որպես չափանիշ հիմք ընդունելով իրականացվող գործունեության տեսակը: Օրինակ՝ Քվեբեքի քաղաքացիական օրենսգրքով նախատեսված է, որ պարտապանների համապարտությունը ենթադրվում է, եթե պարտավորության առարկան, ի թիվս այլնի, **սպասարկումն է**[3]:

Այսպիսով, ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների համապարտ պատասխանատվության հիմքում ընկած տրամաբանության վերլուծությամբ դժվար չէ նկատել, որ այն միանգամայն կիրառելի է նաև զբոսաշրջային գործունեության սուբյեկտների նկատմամբ, քանի որ վերջիններս, ըստ Օրենքի, քաղաքացիական շրջանառությանը մասնակցում են իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակով:

Միևնույն ժամանակ, սակայն, գործնականում զբոսաշրջային գործակալները զբոսաշրջային փաթեթներ իրացնելիս կարող են հանդես գալ ոչ թե իրենց, այլ զբոսաշրջային օպերատորի անունից: Այսինքն՝ նման դեպքերում առերևույթ բացակայում է գործարարական գործունեության հատկանիշներից մեկը, այն է՝ անձի՝ իր ռիսկով և իր անունից գործունեություն իրականացնելը: Այս դեպքերում ողջամտո-

---

[1]Տե՛ս Гражданское право, Том 1, Учебник, Отв. ред. **Е. Суханов**, ‘’Вольтерс Клувер”., 2-ое изд., էջ 238

[2] Տե՛ս **Кирилова Н.,А**., Гражданско-правовая ответсвенность предпринимателей как институт повышения стабильности гражданского оборота https://cyberleninka.ru/article/n/grazhdansko-pravovaya-otvetstvennost-predprinimateley-kak-institut-povysheniya-stabilnosti-grazhdanskogo-oborota/viewer, էջ 93:

[3] Հղումն ըստ՝ **Сарбаш С.В.,** Обязательства с множественностью и особенности их исполнения, էջ 24:

րեն կարող է հարց ծագել՝ կիրառելի է արդյոք զբոսաշրջային գործունեության սուբյեկտների համապարտ պատասխանատվության կանոնը:

Առաջին հայացքից կարող է թվալ, որ զբոսաշրջային ծառայությունների մատուցման պարտավորությունում զբոսաշրջային օպերատորը և զբոսաշրջային գործակալը՝ որպես պարտապաններ, հավասար չեն, քանի որ վերջիններիս գործունեության ծավալը, իսկ զբոսաշրջային գործակալի՝ զբոսաշրջային օպերատորի անունից հանդես գալու դեպքում նաև՝ վերջիններիս կարգավիճակը չեն նույնանում, իսկ «դասական» համապարտ պատասխանատվության կանոնները նախատեսված են այն դեպքերի համար, երբ բոլոր համապարտ պարտապաններն ունեն մեկ միասնական պարտավորություն[1]:

Սակայն համապարտ պարտապանների պատասխանատվության առանձնահատկությունների ուսումնասիրությունը վկայում է, որ դրա առաջացման համար բավական է միայն ընդհանուր նպատակի, այն շահի ընդհանրությունը, որին ուղղված է պարտավորությունն ընդհանուր առմամբ: Միավորող նպատակը, որպես կանոն, պարտատերերի շահերի ապահովումն է: Թեև համապարտ պարտավորության օբյեկտը մեկն է, բայց դա չի խանգարում, որ առաձին պասիվ սուբյեկտների պարտականությունները կամ ակտիվ սուբյեկտների իրավունքները տարանջատվեն[2]: Ուստի համապարտ պարտապաններից յուրաքանչյուրի պարտավորությունը կարող է ունենալ իր առանձնահատկությունները, որոնք բնորոշ չեն մյուս պարտապանների պարտավորություններին: Ընդ որում, մի շարք եվրոպական երկրների օրենսդրությունները, ինչպես նաև միջազգային ունիֆիկացիոն փաստաթղթերն ուղղակիորեն ընդգծում են, որ որոշակի տարբերությունները չեն բացառում համապարտությունը[3]:

Զբոսաշրջային գործունեության սուբյեկտների պատասխանատվության հարցը քննարկելիս անհրաժեշտ է նաև նկատի ունենալ, որ զբոսաշրջային պրակտիկայում քիչ չեն այն դեպքերը, երբ զբոսաշրջային օպերատորի կողմից ձևավորված փաթեթների շրջանակներում կազմակերպված ճանապարհորդությունների ընթացքում զբոսաշրջիկները վնասներ են կրում հենց զբոսաշրջային գործակալների գործողությունների (անգործության) հետևանքով, մասնավորապես՝ զբոսաշրջային փաթեթում ընդգրկվող զբոսաշրջային ծառայությունների տեսակների, դրանց որակական ցուցանիշների և մատուցման պայմանների վերաբերյալ զբոսաշրջիկի պատվերին չհամապատասխանող հարցում զբոսաշրջային օպերատորին ուղարկելու, զբոսաշրջիկի կողմից վճարված զբոսաշրջային փաթեթի արժեքը զբոսաշրջային օպերատորի հետ կնքված պայմանագրի պայմաններին համապատասխան վերջինիս չփոխանցելու, ճանապարհորդության համար անհրաժեշտ փաստաթղթերի ոչ պատշաճ ձևակերպման հետևանքով և այլն: Նշված գործողությունները կամ անգործությունը հենց զբոսաշրջային գործակալի հակաիրավական վարքագծի դրսևորումներ են[4]:

Բացի այդ, թեև Օրենքը չի թվարկում զբոսաշրջային գործունեության սուբյեկտներից յուրաքանչյուրի պարտականությունները, սակայն սպառողի հետ պայմանագիր կնքող զբոսաշրջային գործունեության սուբյեկտին պարտավորեցնում է մինչև

---

[1] Տե՛ս **Безик К.С.**, Некоторые особенности солидарной ответсвенности поручителя// Вопросы частного права, 2015, էջ 51:

[2] Տե՛ս **Шершеневич Г.**, Учебник русского гражданского права, М. Статут, 2005, էջ 261:

[3] Տե՛ս **Крысова Д. П.**, Правовое положение солидарных должников в обязательствах, осложненных множественностью лиц// Вестник магситратуры, 2018 г., N 5-1/80/, էջ 82:

[4] Տե՛ս **Ломакина Е.,** Содержание туристических правоотношений//Европейские перспективы, N 4, 2013, էջ 139:

պայմանագիր կնքելը, ինչպես նաև դրա կնքումից հետո՝ մինչև ծառայությունների մատուցումը զբոսաշրջիկին տրամադրել զբոսաշրջային փաթեթում ընդգրկված ծառայությունների և դրանք մատուցողների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն (հոդված 16, մասեր 2-րդ և 3-րդ):

Հետևաբար, այն դեպքում, երբ սպառողի հետ պայմանագիր է կնքում զբոսաշրջային գործակալը, հենց նա է կրում սպառողին նշված տեղեկատվությունը տրամադրելու պարտականությունը, իսկ զբոսաշրջային օպերատորը, իր հերթին, կրում է համապատասխան տեղեկատվությունը զբոսաշրջային գործակալին տրամադրելու պարտականություն: Ուստի զբոսաշրջային փաթեթի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու՝ սպառողների իրավունքն ապահովելու հարցում հավասար դերակատարում ունեն թե՛ զբոսաշրջային օպերատորը, թե՛ գործակալը:

Այսպիսով, չնայած զբոսաշրջային օպերատորը և գործակալը թե՛ որպես զբոսաշրջային գործունեության սուբյեկտներ, թե՛ որպես կոնկրետ զբոսաշրջիկի ճանապարհորդության կազմակերպման կապակցությամբ առաջացող պարտավորության պարտապաններ ունեն պարտականությունների իրենց շրջանակը, այնուամենայնիվ, դրանք ուղղված են մեկ միասնական նպատակի՝ սպառողի պահանջներին համապատասխան վերջինիս ճանապարհորդության կազմակերպմանը:

Ավելին, հաճախ զբոսաշրջիկի ճանապարհորդության կազմակերպման կապակցությամբ վերջիններիս պարտականություններն այնքան են փոխկապակցված և փոխպայմանավորված, որ նրանցից մեկի կողմից իր պարտականության խախտումն անխուսափելիորեն հանգեցնում է մյուսի պարտականության խախտման: Օրինակ՝ երբ զբոսաշրջային գործակալը թերանում է զբոսաշրջիկի պահանջներին համապատասխանող զբոսաշրջային փաթեթ ամրագրելու հարցում, դրան տրամաբանորեն հետևում է զբոսաշրջային օպերատորի կողմից սպառողի պահանջներին չհամապատասխանող զբոսաշրջային փաթեթի տրամադրումը:

Այս ամենը թույլ է տալիս խոսել զբոսաշրջիկի ճանապարհորդության կազմակերպման՝ որպես զբոսաշրջային ծառայությունների մատուցման պարտավորության առարկայի անբաժանելիության մասին, իսկ Քաղաքացիական օրենսգիրքը որպես համապարտ պատասխանատվության կիրառման հիմք նախատեսում է նաև պարտավորության առարկայի անբաժանելիությունը (հոդված 361, մաս 1):

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարծում ենք՝ զբոսաշրջային գործունեության սուբյեկտների գործունեության բնույթի և բովանդակության վերլուծությունը վկայում է վերջիններիս համապարտ պատասխանատվության կիրառման մի շարք իրավական նախադրյալների առկայության մասին:

Զբոսաշրջային գործունեության սուբյեկտների պատասխանատվության տարանջատման հարցը քննարկելիս հատուկ ուշադրության է արժանի տեղական զբոսաշրջային գործակալների կողմից արտասահմանյան օպերատորների ձևավորած զբոսաշրջային փաթեթների խթանման և իրացման համար սպառողի առջև պատասխանատվության հարցը: Հարկ է նշել, որ միջազգային պրակտիկայում արտասահմանյան զբոսաշրջային օպերատորի կողմից ձևավորված զբոսաշրջային փաթեթներ իրացնող զբոսաշրջային գործակալն իր կարգավիճակով հավասարեցվում է զբոսաշրջային օպերատորին. նրա համար սահմանվում են զբոսաշրջային օպերատորի համար սահմանված պահանջները, առաջին հերթին՝ սպառողների առջև պատասխանատվության ֆինանսական երաշխիքներ ունենալու պարտականություն, ինչպես նաև զբոսաշրջային ծառայությունների պատշաճ մատուցման համար զբոսաշրջային օպերատորի համար սահմանված կանոններով պատասխանատվություն:

Կարծում ենք՝ արտասահմանյան զբոսաշրջային փաթեթների համար տեղական գործակալի միանձնյա պատասխանատվության սկզբունքը, որն արտացոլվել է արտասահմանյան բազմաթիվ երկրների զբոսաշրջային օրենսդրություններում, տրամաբանական հետևանքն է սպառողին իրացվող զբոսաշրջային փաթեթի համար միայն մեկ սուբյեկտի՝ զբոսաշրջային օպերատորի պատասխանատվության կանոնի, որն ամրագրված է այդ երկրների օրենսդրություններով, և որը արտասահմանյան զբոսաշրջային փաթեթների դեպքում «փոխակերպվել է» իր կարգավիճակով զբոսաշրջային օպերատորին հավասարեցված տեղական զբոսաշրջային գործակալի պատասխանատվության սկզբունքի:

Մինչդեռ, մեր կարծիքով, անկախ զբոսաշրջային օպերատորի՝ օտարերկրյա անձ լինելու հանգամանքից, զբոսաշրջային փաթեթի շրջանակներում զբոսաշրջային ծառայությունների մատուցման պարտավորության խախտման համար պատասխանատվության սուբյեկտի հարցը որոշելիս անհրաժեշտ է ելնել սպառողի շահերի առավելագույն պաշտպանության ապահովման անհրաժեշտությունից, ինչը, ըստ մեզ, լավագույնս կարող է ապահովվել զբոսաշրջային գործունեության սուբյեկտների համապարտ պատասխանատվության միջոցով՝ սպառողին հնարավորություն տալով վնասի հատուցման պահանջ ներկայացնել այն պարտապանին, ով տվյալ պահին ի վիճակի է փոխհատուցելու նրա կրած վնասները. չէ՞ որ հենց համապարտ պատասխանատվությունն է պարտատիրոջ համար ապահովում կրած վնասները փոխհատուցելու ավելի լայն հնարավորություններ ոչ միայն այն պատճառով, որ նրա առջև պատասխանատու են բոլոր պարտապանները, այլև նրանով, որ հնարավորություն է ընձեռում պահանջ ներկայացնել այն պարտապանին, ով ի վիճակի է փոխհատուցելու նրա կրած վնասները[1], իսկ գործնականում հնարավոր չէ բացառել այն իրավիճակները, երբ տեղական գործակալները օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով չունենան բավարար միջոցներ սպառողների վնասները փոխհատուցելու համար, ինչը բազմիցս հաստատվել է նաև հայրենական զբոսաշրջային գործակալությունների պրակտիկայում:

Այս դեպքում, սակայն, իրավաչափորեն կարող է առաջանալ օտարերկրյա օպերատորի մասնակցությամբ իրավարաբերությունների նկատմամբ կիրառելի իրավունքի որոշման խնդիրը՝ նկատի ունենալով, որ տարբեր երկրների զբոսաշրջային օրենսդրություններով կարող են նախատեսված լինել սպառողի առջև պատասխանատվության վերաբերյալ տարբեր կանոններ:

Միջազգային մասնավոր պայմանագրի բովանդակության առնչությամբ ՀՀ քաղ. օր. 1284-րդ հոդվածը սահմանում է. «Պայմանագիրը կարգավորվում է կողմերի համաձայնությամբ ընտրված պետության իրավունքով»: Այսպիսով, պայմանագրի բովանդակության հարցում ՀՀ օրենսդրությամբ սահմանված է «կամքի ինքնավարություն»:

ՀՀ քաղ. օր. 1285-րդ հոդվածի համաձայն՝ կիրառվելիք իրավունքի վերաբերյալ պայմանագրի կողմերի համաձայնության բացակայության դեպքում այդ պայմանագրի նկատմամբ կիրառվում է այն պետության իրավունքը, որտեղ հիմնադրվել է, բնակության կամ գործունեության հիմնական վայր ունի այն կողմը, որը կատարում է նման պայմանագրի բովանդակության համար վճռական նշանակություն ունեցող պայմանը (lex venditoris):

Ավելին, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, ի թիվս այլ պայմանագրերի, նախատեսել է նաև գործակալության պայմանագրի դեպքում lex venditoris սկզբունքի դրսևորումը. դա այն երկրի օրենքն է, որտեղ հիմնադրվել է, գործունեության կամ

[1] Տե՛ս **Բարսեղյան, Տ.Կ.,** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, մաս առաջին, Երևան, 2006, էջ 516:

բնակության հիմնական վայր ունի այն կողմը, որը գործակալ է գործակալության պայմանագրում (ՀՀ քաղ. օր, հոդված 1285, մաս 1, կետ 10):

Իսկ կիրառվելիք իրավունքի վերաբերյալ կողմերի համաձայնության բացակայության դեպքում Օրենսգրքում չթվարկված պայմանագրերի նկատմամբ կիրառվում է այն պետության իրավունքը, որտեղ հիմնադրվել է, բնակության վայր կամ գործունեության հիմնական վայր ունի այն կողմը, որը կատարում է նման պայմանագրի բովանդակության համար վճռական նշանակություն ունեցող պայմանը: Պայմանագրի բովանդակության համար վճռական նշանակություն ունեցող պայմանը որոշելու անհնարինության դեպքում կիրառվում է այն պետության իրավունքը, որի հետ առավել սերտ է կապված տվյալ պայմանագիրը (ՀՀ քաղ. օր., հոդված 1285, մաս 3):

Հետևաբար, օտարերկրյա զբոսաշրջային օպերատորի և հայրենական զբոսաշրջային գործակալի միջև թե՛ գործակալության, թե՛ ցանկացած այլ պայմանագրի շրջանակներում համագործակցության դեպքում միջազգային մասնավոր իրավունքի կանոններով այդ պայմանագիրը չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքների նկատմամբ (ՀՀ քաղ. օր., հոդված 1287) կիրառելի կլինի զբոսաշրջային գործակալի հիմնադրման, գործունեության կամ բնակության վայրի, այսինքն՝ ՀՀ օրենքը, եթե իհարկե, կողմերը, օգտվելով կամքի ինքնավարության սկզբունքից, չեն որոշել իրենց պայմանագրային հարաբերությունների նկատմամբ կիրառել որևէ այլ պետության իրավունք:

Ավելորդ չէ նաև նշել, որ այս սկզբունքն ընկած է նաև պայմանագրային հարաբերությունների միջազգային կոլիզիոն-իրավական կարգավորման հիմքում[1]:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք նշել, որ թեև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, ի տարբերություն այլ երկրների[2], ինչպես նաև միջազգային ունիֆիկացիոն փաստաթղթերի, միջազգային մասնավոր պայմանագրային հարաբերությունների նկատմամբ ամրագրված է անսահմանափակ կամքի ինքնավարության սկզբունքը, այնուամենայնիվ օտարերկրյա զբոսաշրջային օպերատորի և հայրենական զբոսաշրջային գործակալի կողմից իրենց հարաբերությունների նկատմամբ կիրառվող իրավունքը որոշելիս կամքի ինքնավարության սկզբունքից չօգտվելու դեպքում կան բոլոր իրավական հիմքերը հայրենական զբոսաշրջային գործակալների հետ համագործակցող օտարերկրյա օպերատորին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանոններով, այսինքն՝ համապարտ պատասխանատվության ենթարկելու համար:

Այսպիսով, առաջարկում ենք Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ հոդվածով.

«Զբոսաշրջային գործունեության սուբյեկտների պատասխանատվությունը

1. Զբոսաշրջային օպերատորը և զբոսաշրջային գործակալը համապարտ պատասխանատվություն են կրում զբոսաշրջային փաթեթում ընդգրկված ծառայութ-

---

[1] Տե՛ս **Հայկյանց Ա.Մ.**, Միջազգային մասնավոր իրավունք, Երևան, ԵՊՀ հրատ., 2013, էջեր 231-232:

[2] ՌԴ քաղաքացիական օրենսդրությամբ հատուկ կարգավորում է նախատեսված սպառողների մասնակցությամբ պայմանագրերի վերաբերյալ. դրանց նկատմամբ կիրառվում են երկու կոլիզիոն կապեր՝ կամքի ինքնավարություն և սպառողի բնակության վայրի իրավունք (lex domicilii), ընդ որում, վերջինս ունի հիմնական նշանակություն: Սպառողի բնակության վայրի իրավունքի կիրառումը սահմանափակում է կողմերի կամքի ինքնավարությունը, քանի որ կողմերի կողմից կիրառման ենթակա իրավունքի ընտրությունը չի կարող սահմանափակել սպառողների այն իրավունքները, որոնք նախատեսված են վերջինիս բնակության վայրի երկրի իմպերատիվ նորմերով:

յունների, դրանց որակական ցուցանիշների, մատուցման ժամկետի և այլ պայմանների, ծառայությունները մատուցողների վերաբերյալ սպառողին ժամանակին և ամբողջական տեղեկատվություն տրամադրելու, ինչպես նաև այդ ծառայությունների մատուցման համար:

2.Օտարերկրյա զբոսաշրջային օպերատորի կողմից ձևավորված զբոսաշրջային փաթեթում ընդգրկված ծառայությունների, դրանց որակական ցուցանիշների, մատուցման ժամկետի և այլ պայմանների, ծառայությունները մատուցողների վերաբերյալ սպառողին ժամանակին և ամբողջական տեղեկատվություն տրամադրելու, ինչպես նաև այդ ծառայությունների մատուցման համար օտարերկրյա զբոսաշրջային օպերատորը և ՀՀ զբոսաշրջային գործակալը կրում են համապարտ պատասխանատվություն, եթե այլ բան նախատեսված չէ նրանց միջև կնքված պայմանագրով:»:

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ РАЗГРАНИЧЕНИЯ ГРАЖДАНСКО-ПРАВОВОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ТУРОПЕРАТОРА И ТУРАГЕНТА

Ева Сагоян
Аспирант кафедры Гражданского права ЕГУ,
Начальник отдела по экспертизе ведомственных правовых актов Министерства юстиции РА

В статье автор рассматривает пробелы отечественного законодательного регулирования правоотношений туроператора и турагента и вопросы разграничения их гражданско-правовой ответственности. Исследуя содержание и цели деятельности каждого из этих субъектов, автор приходит к выводу, что несмотря на функциональные и некоторые другие различия субъектов туристической деятельности, в случае нарушения обязательства есть множество правовых предпосылок для их солидарной ответственности, в частности, предпринимательский характер туристической деятельности, неделимость услуги организации путешествия как предмета обязательства, также некоторые обязательства турагента, вытекающие из статуса отдельного субъекта туристической деятельности, несмотря на то, что он действует от своего имени, или от имени туроператора.

Автор также рассматривает вопросы коллизионного регулирования гражданско-правовой ответственности за туристические пакеты, формированные иностранным туроператором, и продвигаемые и реализуемые отечественным турагентом. Автор приходит к выводу, что если иностранный туроператор и отечественный турагент в соответствии с принципом автономии воли сторон не согласовали иное, то к их отношениям, согласно коллизионно-правовым регулированиям Гражданского кодекса РА, применимо право Республики Армения.

SOME ISSUES OF DISTINCTION OF TOUR OPERATOR'S AND TRAVEL AGENT'S CIVIL LIABILITY

Eva Saghoyan
PhD student at the YSU Chair of Civil Law,
Head of division at the Agency for Expert examination
of Legal acts of the RA Ministry of Justice

In the article the author discusses gaps of the domestic legislation regulating relationships between tour operator and travel agent and distinction of civil liability thereof. Studying the content and aim of their activities, the author comes to the conclusion that despite the functional and other differences of the mentioned subjects of tourism activity, there are many legal premises for their solidary liability in case of infringement of their obligations, in particular entrepreneurial nature of tourism activity, indivisibility of travel organization service, as well as some obligations of tour agent, notwithstanding the fact, he acts on his own behalf, or on behalf of the tour operator.

The author also discusses some issues of collision regulations of civil liability for package tours formed by the foreign tour operators and promoted and realized by domestic tour agents. The author concludes, that if foreign tour operator and domestic tour agent don't agree otherwise, the law of the Republic of Armenia is applicable to their relationships.

Բանալի բառեր - *զբոսաշրջային օպերատոր, զբոսաշրջային գործակալ, զբոսաշրջային փաթեթ, համապարտ պատասխանատվություն, կոլիզիոն-իրավական կարգավորում, գործարարական գործունեություն, սպառող*
Ключевые слова: *туроператор, турагент, туристический пакет, солидарная ответственность, коллизионно-правовое регулирование, предпринимательская деятельность, потребитель*
Key words: *tour operator, travel agent, package tour, solidary liability, collision regulation, entrepreneurial activity, consumer*